ԱԽԵՏԱԲԵՐ

«ԱՀԱՒ ԵՍ ՁԵԶԻ ՄԵԾ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԱԽԵՏԻՍ ԿՈՒՏԱՄ»: ՂՈՒԿ. Բ. 10

ՀԱՏՈՐ 25 ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ· ԱՊՐԻԼ 10, 1872· Թիւ 15

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եկեղեցւոյ կառավարութիւնը: — Միաբան աղօթքի առաջարկութիւն մը: — Իր որդւոյն սիրոյն համար: — Անցեալ տարուան Աւետարերի 33 Թուոյն մէջ յիշուած զարմանալի դատին վախճանը: — Շամախի: — Ձամբորդութիւն ի Բէրմաստը, ի Պալըքէսէր և ուրիշ տեղեր: — Քաղաքական լուրեր: — Ազգ: — Ծանուցում. — Նուկայի գիներ:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՔԵԼՈՅ յատուկ պաշտօնն էր՝ 1. Քրիստոսի և մանաւանդ անոր յարութեանը նկատմամբ ի պաշտօնէ վկայութիւն տալ (Ղուկ. ԻԴ. 48. Յովհ. ԺԵ. 27. Գործ. Ա. 21—26.): 2. Քրիստոսի սորվեցուցած վարդապետութիւնները ու պատուէրները ուրիշներուն սորվեցնել (Մատթ. ԻԸ. 20): 3. Քրիստոսէ խոստացուած Հոգւոյն Սրբոյ մանաւոր առաջնորդութեամբը նոյն վարդապետութիւնները և պատուէրները բացատրել (Յովհ. ԺԴ. 26).

Պօղոս, թէպէտ տասներկու Առաքելոց թիւէն չէր, նոյն իսկ Տէրոջմէն մանաւոր կերպով մը կոչուեցաւ առաքելական պաշտօնին, և այս գործին յարմար ըլլալու համար հրաշալի կերպով յատուկ յայտնութիւններ ընդունեցաւ յԱստուածէ (Գործ. ԻԶ. 15. 16, Ա. Կորնթ. Թ. 1, ԺԵ. 8; Գաղ Ա. 11, 12):

Ապա Առաքեալք Աստուծմէ կարգեալ յատուկ պաշտօնեաներ էին, մանաւանդ կերպով պատրաստուած Քրիստոնէական եկեղեցւոյն հիմնադիրներն ըլլալու: Այս պատճառաւ «Առաքեալներուն և Մարգարէներուն հիմին վրայ չինուած» կ'ըսուի եկեղեցւոյ համար, որոյ «Անկիւնին գլուխը», այսինքն՝ գլխաւոր անկիւնաքարը, նոյն ինքն Քրիստոս է: Առաքելոց տրուեցաւ իշխանութիւն հրատարակելու Աւետարանին վարդապետութիւնները, և պէտք եղած կարգադրութիւններն ընելու եկեղեցւոյ բարեկարգութեանն ու զարգացմանը համար: Գործք Առաքելոց դիրքէն և Առաքելական Թուղթերէն անոնց սորվեցուցած վարդապետութիւնները ու հաստատած կարգերը միանգամայն կը սորվինք:

Ամեն ամեն սա խնդիրը յուզած է, թէ Առաքեալք յաջորդ ունէին թէ ոչ. իրենցմէ եաքը եկողներուն տուին այն իշխանութիւնը զոր իրենք կը վարէին եկեղեցւոյ մէջ, և թէ հիմա ալ կան այնպիսի անձինք որ կարողութիւն ունին իբր աստուածային արտօնութեամբ ամէն եկեղեցական խնդիր որոշելու և վճռելու: Ըստ մեզ շատ յայտնի է թէ Առաքելոց պաշտօնը և իշխանութիւն ուրիշներուն չանցան: Անոնք երէցներ ձեռնադրեցին ամէն քաղքի մէջ՝ յանձնելով անոնց հնամ տանել այլևայլ եկեղեցիոց, բայց նոյն Առաքելոց դրութիւններուն մէջ բնաւ տեղ մը չենք կարդար թէ անոնք Առաքեալ ըլլալու համար մարդիկ ձեռնադրեցին, բայց ի Մատաթիայէն զոր, իրենց պաշտօնը գործադրելու սկսելէն առաջ, ընտրեցին փոխանակ Յուդայի: Երբ Յակոբոս Առաքեալ Հերովդէս Թագաւորէն սպաննուեցաւ, Առաքեալք անոր տեղը բռնելու համար ուրիշ մը չձեռնադրեցին: Արդարև Առաքեալներէն եաքը եկողները Քրիստոսի կենաց և վարդապետութեանը նկատմամբ ականատես վկաներ չէին կրնար ըլլալ, քանզի ներկայ դտնուած չէին Քրիստոսի իր Մեսիական պաշտօնը կատարած միջոցին, ոչ ալ փաստ մը կայ կարծելու թէ Հոգւոյն Սրբոյ այն մասնաւոր ազդեցութիւնը կամ ներշնչութիւնը որ Առաքելոց տրուած էր՝ անոնցմէ եաքը եկողներուն ալ տրուեցաւ: Անոնք որ Առաքեալներէն եաքը եկեղեցիներուն հոգ տանելու համար կարգեցան՝ պիտի սորվեցնէին ինչ որ քրեներ սորված էին Առաքեալներէն, բայց կարող չէին պէս իբր յԱստուածաշունչ ներշնչեալ մարդիկ խօսել: Առաքելական պաշտօնը յատկապէս Քրիստոնէութեան սկզբանը կամ հիմնարկութեան ժամանակին համար միայն ըլլալով, անոնց հետ վեր ջացաւ: Ուստի ով որ կը սընդէ թէ ինք Առաքելոց յաջորդն է և եկեղեցւոյ մէջ անոնց ունեցած պաշտօնը և իշխանութիւնն ունի՝ անտեղի պահանջում մը ըրած կ'ըլլայ:

ՄԻԱԲԱՆ ԱՂՕԹՔԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԸ

1869 տարւոյն Դեկտեմբերի մէջ Հռոմ գումարուած Տիեզերական ժողովոյ առթիւ, Պր. Տ' Օպինեէ, երևելի եկեղեցական պատմադիրը, Եւրոպիոյ Բողոքական ժողովրդոց առաջարկեց յատուկ աղօթք ընել որպէս զի ճամբայ բացուի Սուրբ Գրոց տարածմանը Հռոմ քաղքին մէջ, և որպէս զի Աւետարանին պարզ վարդապետութիւնները ընդունելութիւն գտնեն բոլոր աշխարհիս վրայ բնակող Պապական ազգերէն: Այնուհետև պատահած դէպքերը յայտնի են ամենուն, այսինքն՝ Գերմանիոյ մէջ Տիեզերական ժողովին որոշմանը դէմ ծագած հակառակութիւնը որ Եւրոպիոյ ուրիշ կողմերն ալ տարածուեցաւ, նոյն իսկ Հռոմ քաղքին մէջ Սուրբ Գրոց աղատօրէն տարածուիլը և Աւետարանական քարոզչաց հոն աշխատիլ սկսիլը, Սպանիա և Ամերիկայի ցամաքին վրայ Մէքսիկոյ կոչուած երկիրը Պապական ժողովրդոց մէջ սկսած արթնութիւնը,

Այս իրողութիւնները միաբան աղօթքն աւելի եռանդեամբ շարունակելու քաջալերիչ պատճառներ համարելով Պր. Քիննարտ, Անգղիոյ խորհրդանոցին անդամներէն մին, գրեց Պր. Տ' Օպինեէյի՝ առաջարկելով որ ուրիշ հրաւէր մը հանուի միաբան աղօթելու այս տարուան Մայիս ամսուն մէջ, Պր. Տ' Օպինեէ յօժարութեամբ ընդունեց այս առաջարկութիւնը, և սոյն երկու անձինք ուրիշ բարեկամներու հետ նոր հրաւէր մը հրատարակեցին բոլոր Քրիստոնէից, առաջիկայ Մայիս ամսուն 7/19 էն սկսեալ մինչև նոյն ամսուն 14/26ը յատուկ շաբաթ մը միաբանական աղօթքի նուիրելու հետևեալ նիւթոց վրայ։

1. Աղօթք Բողոքական եկեղեցեաց համար, որպէս զի Աւետարանին վարդապետութիւններն աւելի զօրաւոր ազդեցութիւն մը ընեն յիշեալ եկեղեցեաց անդամներուն սրտին և վարուցը վրայ։

2. Աղօթք Պապական եկեղեցւոյն վերաբերեալ ժողովրդոց, մանաւանդ քահանայից և բոլոր կղերական դասուն դարձին համար Աւետարանին ճշմարիտ վարդապետութիւններուն։

3. Աղօթք մանաւոր երկիրներու համար։ Ա. Դաղիոյ համար՝ որպէս զի անոր անհաւատութիւնը դառնայ ճշմարիտ հաւատքի. Բ. Սպանիոյ համար՝ որպէս զի այս երկրին ժողովուրդը որ ճշմարտութիւնը վնտռելու եռեռւէ է՝ առաջնորդուի Աւետարանին կատարեալ լոյսն ընդունելու. Գ. Իտալիոյ համար՝ որպէս զի անոր նոր աղատութիւնը օրհնուելով պատճառ ըլլայ ապագայ արթնութեան. Դ. Գերմանիոյ համար՝ որպէս զի հնձագած կրօնական վէճը նոր բարեկարգութեան մը առիթ ըլլայ, և այլն։

4. Աղօթք որպէս զի Աստուած օրհնէ Աւետարանին բոլոր քարոզիչներուն աշխատութիւնները աշխարհիս երեսը ցրուած հեթանոս ազգայ մէջ։

Մենք վերոյիշեալ հրաւէրին պարունակութիւնը շատ համառօտիւ մեզի մէջ բերինք։ Հրաւէրն ընդունողը կը խնդրեն որ վերը առաջարկեալ նիւթոց վրայ չեռմեռանդ աղօթքները ըլլան առանձին և ընտանեօք, և, եթէ հնար է, հոգևոր օրհնութիւն մաղթող նոյն նիւթոց վրայ աղօթելու նպատակաւ նաև հրապարակական աղօթքի ժողովներ կանչուին. Մայիս 7/19 կիրակի օր արուելու քարոզներն ալ դերձեալ նոյն նիւթերուն վերաբերութեամբ պատրաստուած ըլլան։

ԻՐ ՈՐԴՒՈՑՆ ՍԻՐՈՑՆ ՀԱՄԱՐ

Քանի մը տարի առաջ, Ամերիկայի ներքին պատերազմին առեն, երբ եւևելի դատաւոր մը օր մը իր գրասեղանին առջև նստած կարևոր գործերով կը զբաղէր, զինուորի հագուստով մարդ մը որ հիւանդ և աղքատ կ'երևնար, անոր քով եկաւ. Դատաւորը որ իր ուշադրութիւնը զբաղած գործէն դարձնել չէր ուզեր՝ ծանօթութիւն չըրաւ զինուորին հետ որ անոր առջևը լուռ կայնած էր, և շարունակ կը խառներ գրպանները, որպէս թէ բան մը կը վնտռէր. և վերջապէս վնտռածը չգտնելով, շատ տկար ձայնով մը և խոնարհութեամբ ըսաւ դատաւորին. «կարծեմ, տէր, ձեզի համար նամակ մը ունէի»։ Դատաւորը տակաւին իր գործին զբաղած անոր ամենևին ուշադրութիւն չէր ըներ. Քիչ մը ետքը զինուորը վնտռած նամակը գտնելով դատաւորին գրասեղանին վրայ դրաւ. Փոքրիկ նամակ մըն էր, և դատաւորն այն թուղթը ողորմութիւն խնդրելու համար աղերսագիր կարծելով, և իր զբաղումէն արգելուելուն համար նեղսրտելով, մարդը վռնտելու վրայ էր, մինչ աչքը նամակին վրայ դարձնելով, հասցէէն հասկցաւ թէ նամակն իր որդիէն էր, որ զինուոր ըլլալով հեռու տեղ պատերազմի գացած էր բանակին հետ։ Այս տեսնելով դատաւորը, նամակը բացաւ և մէջը այս խօսքը կարդաց, «Սիրելի հայր, Նամակը բերողը հիւանդ զինուոր մըն է, որ իր երկիրը կ'երթայ. կը խնդրեմ որ իմ սիրոյս համար անոր ամէն կերպով օգնէք։ Ձեր որդին Կարոլոս»։

Դատաւորին սիրտն իսկոյն կակղցաւ, խեղճ և հիւանդ զինուորն առաւ իր տունը, կերակրեց, իր որդւոյն անկողինը պառկեցուց, հանդերձ տուաւ և անոր ամէն պէտքը հոգաց իր որդւոյն սիրոյն համար։

Այսպէս Աստուած միշտ կը լսէ անոնց աղօթքը որ անոր կը դիմեն իր սիրելի Որդւոյն անուամբը։ Աստուծոյ սիրտն այն դատաւորին սրտէն աւելի մեծ է, և աւելի կը սիրէ իր Որդին, քան թէ այն դատաւորն իր կարողոսը։ Երբէք պիտի չմերժուին անոնք որ յանուն Որդւոյ աղերս կը մատուցանեն Հօր։

ԱՆՑԵԱԼ ՏԱՐՈՒԱՆ ԱԻԵՏԱԲԵՐԻ 33 ԹՈՒՈՑՆՄԷՋ ՅԻՇՈՒԱԾ ՋԱՐՄԱՆԱԼԻ ԴԱՏԻՆ ՎԱԽՃԱՆԸ

Զարմանալի դատը, որուն վրայ Աւետարերի վերոյիշեալ թուոյն մէջ խօսուած է, առեն առեն դադրելով ընդամէնը իբր 9 ամիս տեւելէն ետքը, մեռաւ վերջացաւ,

Դատաւորաց առեանը իբր 103 օր այս դատին քննութեանը և վճռոյն զբաղեցաւ։ Անգղիացւոց սովորութեանը համեմատ, դատը տեսնելու համար որոշուած դատաւորէն զատ, տասներկու հոգի ալ դատին սկիզբէն ընտրուեցան՝ երկուստեք մէջ բերուելու իրողութիւններն ու փաստերը մտիկ ընելու, և յուզուած խնդրոյն վրայ իրենց վճիռը յայտնելու։ Այս 12 մարդոց ամէն մէկն օրը կ'առնէր անգլիական կինէ մը, որ մաքուր ստակով 115 դահեկանի հաւասար է, ուստի և իւրաքանչիւր ոք առաւ դատին համար ընդ ամէնը 118 լիրա։ Կը կարծուի թէ դատին ամբողջ ծախքն իբր 200 հազար անգղիական լիրայի հասաւ։ Դատաւորաց վճիռն առաջուց առհասարակ կարծուածին պէս եղաւ, ինչպէս որ յիշեալ յօդուածին մէջ անատեն ըսուած էր. այսինքն՝ ստացուածքին կորսուած տէրն ըլլալ պնդելով ստացուածքը ետ պահանջողն իբր խաբեբայ վճռուեցաւ, հետևապէս պահանջած ստացուածքը չկրցաւ առնել, և եաքը բռնուելով բանտարկուեցաւ, և կ'երևի թէ սեռդիմութեանը կամ երդմամբ սուտ վկայութիւններ տալուն համար խստիւ պիտի պատժուի։

ՇԱՄԱԽԻ

Շամախիէն գրուած և հրատարակելու համար բարեկամի մը ձեռքով մեզի յանձնուած նամակներ լուր կուտան, թէ սոսկալի երկրաշարժ մը պատահած է մօտերս Շամախի, որ Կասպից ծովուն եզերքը Ռուսիոյ վերաբերեալ քաղաք մըն է։

Անցեալ տարիներ Աւետարեր կարգացողները յիշեալ քաղքին մէջ ջերմեռանդ և նախանձաւոր Աւետարանական եղբայրներուն վրայ քիչ շատ տեղեկութիւն ունենալով, սրտանց կարեկից պիտի ըլլան այս եղբայրներուն, անոնցմէ շատերուն այսպէս յանկարծ մեռնելուն, և միացողներուն ալ նեղութեան և սրտմտութեան մէջ գտնուելուն համար։

Հետեւեալ յօդուածը յիշեալ նամակներէն քաղուած է։

Շամախի 19 Յունվ. 1872

Քրիստոս Յիսուսումն Սիրելի եղբարք,

Դուք ի հարկէ լսել էք, ամսոյս 16 ին Շամախի եղած երկրաշարժից, որի հետեւարը երբէք չի տեսուել, և մեր ժողովուրան քանդուելից։ Որովհետև Բաստօր (Հովիւ) Դուլխանեանց արդէն ամսոյս 10 ին Նուխի էր գնացել Ճաշուան քարոզի ես էի պատրաստուած։ Ժամը 9 ին դեռ 10 րոպէ միացած մի նուազ երկրաշարժ եղաւ հինգ րոպէ չտեւած զարձեալ ալ աւելի նուազ շարժեց, շատ մարդիկ չիմացան։ Տասնին կէս ժամ միացած գնացել ժողովուրան, և մի քառորդ միացած ասող եղաւ սկսել, բայց ես առաջարկեցի «Մէկը տեսայ վայրկէն կախուած» երգը նս երգել։ սորա երկրորդ տան երբորդ տողը «Իմ մահս է քեզի համար» բերաններուս էր, և ժամանակին դեռ հինգ 10 վայրկեան կար, ահա գետինը սաստիկ շարժեց ու վայրկեան առ վայրկեան աւելի նս սաստկացաւ։ Ի հարկէ եղբարք միշտ շարժ տեսել են, չի կարծեցին թէ այսպէս ահարկու պիտի լինի, և թէ Տէրը այդ ժամի համար էր պատրաստել իւր շարժը։ տեսաւ ժողովուրդ թէ պատից քարեր քանդվում է, վեր կացան բոլոր ամբողջը ոտքի, բարեբախտաբար մեծ դուռն փակուած էր, վարժատան կողմից էր երթեւեկութիւնը շատ մասը մարդկանց փախան դէպ ի նա, քանի մը անձինք կանանց կողմը և քանի մը անձինք այս գլխի ինձնից մօտ նախասենեակ։ Եթէ մեծ դուռն բաց էր եղել, մարդիկ այն տեղ շատ կը մեռնուէին, ոչ թէ միայն նրան համար որ այն կողմը ամենից շուտ քանդուեց, այլ և իրար ոտնատակ կ'տանէին։ Մէկ մ'ալ բոլոր շէնքը վար եկաւ, և ով որ այս և այն կողմը չէր անցել, միաց վերատակի ներքև։ Մենք 40 ից աւելի քանդուածներին տակից մինչև 4 կամ 4 ½ ժամ միաւից յետոյ հանեցինք։ բոլոր մեռածները ժողովարանի միջումն 20 հոգի էին։ տասնմէ զատ իրենց տանը մէջ մեռնող 4 եղբայրներ ալ կային որոնց ամէնը ամսոյս 17 ին թաղեցինք։ Քանի մի եղբարց ընտանիք միացին ողորմելութեան մէջ, ոմանք գոնէ խնամատար ազգական ունին, թէև նոցա ցաւն ալ մեծ է բայց կան և այնպիսիք որ ոչ ոք չունին, միացին խեղճ այրիացած կանայք, իրանց մանրիկ որբերով քանդուած տուներն պատերի տակին։

Մի այսպիսի մեծ շարժմունքի համեմատ շատ մարդ չէ մեռել քաղաքիս։ Եթէ մեր ժողովարանի և մի Տաճկաց վարժարանի վրա չի լիներ, որի մէջ աստուածն 13 երեխայք կոտորվել, մի այնքան մահ չէր լիներ։ Թէպէտ շատ տուներ է խարտ կործանուել և շատ տան ընտանիք միացել են այդպիսի քանդուածների տակին, բայց շատեր կենդանի հանել են։ ...

Յաւումէ ամենեցիս մարմին, արտարեւ շատ աշխատալից և բրտնած ցուրտումն միալից, և մասնաւոր գլխի պատահածներ և վիրաւորուածներ էլ կան։

20 Յունվար։ մինչև այս ժամ ողջ ենք, փառք Աստուծոյ, յանձնուած նորա հայրական կամքին միամիտ ողջ։

Տէր ձեզ հետ
Ս. Հա.

Վերոյիշեալ նկատմամբ Սօխումէն Փետ. 21 թուականով գրուած նամակէ մ'ալ հետեւեալը կը քաղեմք։

Տակաւին չի զադարում գետին շարժ գալ, որով ամէն մարդկանց ձեռից առնուեցաւ բնակելի տուներ։ բոլոր քանդուած և վնասուած է։ Տէրութեան կողմանէ հաշիւ են բերած, բոլոր քաղքի միջում դանուել է միայն 8 տուն չի վնասուած, միացած տուներ քանդուած և վնասուած են գտել։ եկեղեցիներ և մէչիտներ քանդուած և 118 հոգի մեռած են գտել, և 40 հոգի վնասուած։ Ա. Հ. զրում է Քաղաքից մին այնպիսի ձայն է դուրս գնացել յալի և ողբալի որ մինչև 9 վերսթ (16 մղոն) լսուել է, տես թէ ինչպիսի դրութեան մէջ են այժմ նորանք որ ոչ տուն ունին ոչ ապրուստ։ այսպէս ձմեռուան ժամանակին միացել են երկինքի տակ։ Կրկին գետին որ շարունակում է շարժ գալ միացած վնասուած տուներն ալ քանդվում է, յոյսն էլ կտրուել է, որ էլ չեն կարող մնալ Շամախի։ ուզում են դուրս գալ բոլոր բնակիչներ։ Թէ ինչ պիտի ընեն խեղճ մարդիկ ինչով դուրս գան, սպասում են Տէրին և զօմիսէրին օգնութեան որ կարողանան դուրս գալ այդ քաղաքից։ Ափսոս, մեր Շամախու ընկերութիւն որ այժմ այդպիսի դրութեան մէջ է, ով գիտէ ինչ կոզմեր պիտի ցրուին։ Գրումեն որ 20 հոգի մեծ հաւատարիմ եղբարք էին որ մեռան. Աստուած ինք ողորմի նրանց, թէ չէ մեծ վտանգի մէջ են... Ամէն տեղ գրում են որ այդ եկեղեցին չի քանդուելու համար օգնութիւն անեն որով կարողանան մին կողմ միատեղ չունել... Խնդրեմ հետեւիք եղբարց մէջ ասելի կամ ինչ տեղ որ բարեհաճիք, որ նրանց օգնութեան մասնակից լինին որուն համար Տէր հազարապատիկ վճարելու է իր խոստմանը համեմատ։ Աղաչենք սիրելի Փրկչին որ ինք օգնէ նորանց և ողորմի։ Իրաւի Տէրոջը խօսքին նման նրանց համար «գոյի պէս» եկաւ որ իսկի չէին սպասել։ Թող Տէր մեզ ամենիս զարթուն և պատրաստ պահէ որ երբ մահ կանչելու լինի, կարողանանք մեր հոգին նորան յանձնելի։ ամէն։

Աւետաբերի համար։

ՁԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՔԷՐՄԱՍՏ,
ԻՊԱԼԷ ՔԷՍԷՐ ԵՒ ՈՒՐԻՇ ՏԵՂԵՐ.

(Աւետաբերէն 14 երրորդ համարոյն շարունակութիւն)

6. ՊԱՊԱ ԵԱԳԱՍԸ։ Կէօնէնի Աբեմտեան կողմը 1 ժամ հեռու 25 տուն. ուոր Եէօրիւկ կոչուած Մահմետական բնակչօք գիւղ մ'է։ Բնակիչները կարդալ չէին գիտեր։ Գիշեր իջևան ըրած սենեակս ասոնցմէ բաւական թուով անձինք գալս եկան, որոնց Սուրբ Գրոց այլ և այլ մասերէն կարդալով բացատրելուս, իրենց գլանիկները (ցիկարա) ձգելով մոխիկ կ'ընէին։

7. ԷԼՊԻՋԼԻՒ։ Կէօնէնի Աբեմբտեան Հիւսիսային կողմը 3 ժամ հեռու 150 տնուոր Պուլկար Ցոյն բնակչօք գիւղ մ'է։ Ասոնք ալ Ցոյն դրականութեան սկսած էին և Ցունարէն գիրքեր կ'ուզէին որ չունէի, և ստիպուեցան Ցունարէն գրով Տաճկերէն (Գարամանլը) քանի մը Նոր Կտակարան և ուրիշ գիրքեր գնել։

8. ՍԱՐԸ ԳԻՕՁ։ Էլպիզլիւի Հիւսիսային Արևելեան կողմը 2 ժամ հեռու 150 տնուոր Պուլկար Ցոյն, և 350 տնուոր Մահմետական բնակչօք գիւղ մ'է։ Այս տեղոյն Քրիստոնեայ բնակիչները՝ «Գիրքերդ Բողոքականի գիրքեր են» ըսելով գնել չուզեցին. ուստի և 3 կտոր գիրք և քանի մը տետրակ միայն ծախուեցաւ։

9. ՓԱՇԱ ՉԻՓԼԻԿԻ։ Սարը Գիւղի Արևելեան կողմը 3 ժամ հեռու 30 տուն. ուոր Պուլկար Ցոյն բնակչօք գիւղ մ'է։ Միայն 2 անձինք կարդալ գիտէին, ասոնք ալ գիրքերուս Բողոքականի գրեանք ըլլալը պատճառ ընելով գիրք չառին։ Կիրակի օր եկեղեցի երթալուս տեսայ որ երկու կարդալ գիտցողներէն մէկը միայն հոն էր, և քահանան պատարագի արարողութեան կատարման օգնելու համար բաւական տիրացու և դպիր չունենալով շատ դժուարութիւն կը կրէր։ Ցորեկը գիւղին հրապարակը խաղալու համար ժողվուած բազմութեան քով երթալով նոր Կտակարանի քանի մը մասերէն կարդացի, և բացատրեցի. այս պատճառաւ բազմութիւնը քովս դիզուեցաւ։ Կը ցաւէին որ կարդալ չգիտնալով չէին կրնար գիրք գնել։ Քահանային ըսի, «Ինչո՞ւ չես ջանար, որ ասոնք կարդալ սորվին»։ Պատասխանեց թէ 3 գիւղի քահանայութիւնը առած եմ, ուսան միշտ այն 3 տեղերը փոփոխակի պատելով չեմ կրնար ուրիշ քանի ձեռք զարնել։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Մարս· 29 րս Յունուար, եւ Ապրիլ · 10 րս Լաս· 1872։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Մօտերս տրուած կայսերական հրաման մը օտար երկիրներէ Տաճկաստան բերուած ամէն տեսակ երկրագործական գործիքներ եւ մեքենաներ ազատ կը կացուցանէ։

—Լուսանկարի մասին քաղքիս մէջ համբաւ ասոր եղող Ապտուլլահեան եղբայրներէն Գէորգ Ապտուլլահեան այսօրերս տեսարան մը հրատարակեց Հայաստանի մէջ գտնուած հին բերդերու արձանագրութեանց վրայ։ Ա.յս փոքր տետրակը կը պարունակէ Տօքթօր Մորթմանին յիշեալ արձանագրութեանց նկատմամբ անցեալները խոստած ճառերուն էական մասունքը, որոնց վրայ նաեւ Աւետաբերի մէջ համառօտիւ տեղեկութիւն տրուեցաւ, եւ ուրիշ կարեւոր դիտելիք նոյն նիւթին նկատմամբ։ Պ. Ապտուլլահեան այն արձանագրութեանց պարունակութենէն կը հետեւցնէ թէ Հայերն այն հին ժամանակին մէջ երեւակայութեան եւ դեղարուեստից մասին հին Յունաց հաւասար էին։

—Կառավարութիւնը Մանդուէմ եւ Օրադիր լրագիրները երկու ամսուան համար դադրեցուցած է, պատճառելով թէ առաջինը իր 1876 եւ 1877 թիւերուն մէջ «Տէրութեան դէմ ծայրայեղ լեզու մը գործածած» է, եւ թէ երկրորդը իր 699 թուոյն մէջ «Մխախոտի վենալճառութեան նկատմամբ բրած դիտողութիւններուն մէջ կայսերական կառավարութեան օրինաց եւ սկզբանց հակառակ եւ վնասակար դիտողութիւններ» հրատարակած է։

— Տիգրանակերտէն եկած հեռագրալոյս մը նայելով Հալէպ և Անտիոք սաստիկ երկրաշարժ եղած է։ Հալէպի մէջ պատեր փլած եւ քանի մը անձինք մեռած են։ Կ'ըսուի թէ Անտիոքի մէջ երկրաշարժն աւելի սաստիկ եղած է, և թէ իբր 1500 մարդ փլատակներու տակէն հանուած են. բայց չարժին պատճառաւ յիշեալ քաղաքին հետ հաղորդակցութիւն ունեցող հեռագրական թելերը կոտրատած ըլլալով ճիշդ տեղեկութիւն մը դեռ առնուած չէ։

ՃԱՐՈՆ

Ճարոնի Մէյճոյ կոչուած կայսրը մօտերս իւր առաջին պաշտօնեան, տէրութեան բարձրաստիճան պաշտօնատարներէն չատերուն հետ, ղրկած է իբրեւ դեսպան Ամերիկայի Միացեալ Նահանգները և Եւրոպիոյ այլեւայլ երկիրները։ Բոլոր այս անձինք իրենց սպասաւորներովը 100 հոգիէ աւելի են։ Իսկ դեսպանութեան նպատակը կրկին է, նախ՝ առեւտուրի և բարեկամութեան վերաբերեալ աւելի ընդարձակ և օգտակար դաշնադրութիւններ ընել այն Տէրութեանց հետ. երկրորդ՝ անոնց օրէնքներուն և կարգադրութիւններուն նկատմամբ տեղեկութիւններ ստանալ Ճարոնի մէջ նոր և լաւագոյն կարգեր և կանոններ հաստատելու համար։

Յիշեալ Դեսպանը եկաւ նախ Ամերիկայի Միացեալ Նահանգները, ուր մեծ պատուով ընդունուեցաւ։ Հասարակապետութեան Նախագահէն և բոլոր ժողովուրդէն։ Դեսպանին հետ այնչափ մարդոց ղրկուիլը անոր համար է որ, անոնցմէ ոմանք Դեսպանին այցելութիւն ընելու երկիրներուն մէջ անկէ աւելի երկայն ատեն մնալով, լաւվին տօրվին անոնց կարգադրութիւնները և սովորութիւնները։ Ճարոնցիք չատ փափաք ունին մանաւանդ իրենց դպրոցները բարեկարգելու, և Ամերիկայէն հմուտ ուսուցիչներ հրաւիրած են այս մասին օգնութեան համար։ Ճարոնի դպրոցներուն մէջ լեզուն մինչև ցարդ Չիներէն էր, գիրքերուն հեղինակներն ալ Չինացի էին. բայց Չիներէնը Ճարոնցոց համար օտար լեզու մը ըլլալով, անոնք հիմա կ'ուզեն այս մասին փոփոխութիւն ընել, և ոմանք կ'առաջարկեն Չիներէնի տեղ Անգղիերէն լեզուն ընդունիլ։ Եթէ այսպէս ընեն, հաւանական է թէ երկրին լեզուն ժամանակաւ փոխուի, և այս փոփոխութիւնը հարկաւ մեծապէս պիտի նպաստէ Քրիստոնէութեան յառաջադիմութեանը Ճարոնի մէջ։

— Զինու Հօնկքօնկ քաղքէն Ապրիլ 5 թուականով տրուած հեռագրալոյս մը նայելով Ճարոնէն յիշեալ քաղաքը լուր հասած է թէ 12 անձինք Միքատոյի կենացը դէմ դաւաճանութիւնմը նիւթելով, երկուքը բռնուած, և մնացեալները փախած են, և թէ հաւանականաբար ուրիշ չատեր ալ այս դաւաճանութեան մասնակից են։ Դաւաճաններուն ցցուցած պատճառը որուն համար կ'ուզէին զՄիքատոն սպաննել, սա է թէ անիկա թոյլ տուութիւն ըրաւ օտարականաց Ճարոնի մէջ ազատ բնակիլ և առեւտուր ընել։

ԱԶԳ

Բերա նորօգ հաստատեալ Հայկական ատենախօսութեանց առաջին շրջանի չորրորդ ճառը, դարձեալ Տօքթօր Մինասեան էֆէնտիի տանը մէջ պիտի խօսի Պատուելի Մարտիրոս Շմաւոնեան։

Նիւթն է «Փիւրաները»։ Սոյն ծանուցմամբ անխտիր կը հրաւիրուին բոլոր Մեծ. բարեկամք ներկայ գտնուելու այս իրիկուն Ապրիլ 10 (րս Յունուար Մարտ 29) ժամը ճիշդ 2 1/2ին։

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Տղայոց համար Աւետաբերի բաժանորդ գրուողներն ի սկզբան կարծուածէն շատ աւելի ըլլալով, յիշեալ թիւն առաջին թիւը բաւական չեղաւ բոլոր բաժանորդաց, ուստի և կրկին տպագրութեան համար Ամերիկայէն պատուիրած պակերազարդ թուղթերը մեր ձեռքը հասնելուն պէս՝ իսկոյն երկրորդ տպագրութիւն մը պիտի ընենք, և ան ատեն յիշեալ թուէն չստացողաց բաժանորդաց պէտք եղած օրինակները պիտի ղրկուին։

ՇՈՒԿԱՅԻ ԳԻՆԵՐ

			Ղուրուշ
Պղպեղ սեւ		օխ.	8¾—9
Երկաթ Անգլ. գաւազան,		կենդինարը	80 - 85
» » Թիթեղ		»	90—95
Շաքար փոշի		կենդ.	240—245
» գլուխ		»	290—300
Խանվէ	100	օխ.	1020—1150
Ամերիկայի Բէզբոլի իւղ.		տնտուկը	80—82
Տարեն կարծր Բուժէլի		քոսը	26—30
» » Անատոլու		»	27—29
» կակուղ Բուժէլի		»	24—28
Պողպատ		սնտ.	215—225
Թիթեղ	զոյգ	»	310—320

ԱՄԵՐԻԿԱՆ ՄԻՍԻՈՆԱՐԱԿԱՆԸ ՇԻՐԻՔԻ ԹԱՐԱԳԸՆԱՑ

Միհէլեանի կազմա Ե. Պ[illegible]

ՍՊԱՆՊՈՂ
ԱՐԱՄԵԱՆ ԹԱՊԱՆԷՍԻՆՏ
Զագմագճըլար, Յակոբեան խան, Նում. 2.